Արձանագրություն N 3

ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/49 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով ԵՊՀ կարիքների համար լաբորատոր սարքերի և պարագաների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 11.03.2024թ.

Մասնակցում էին՝ ժ. 11:00

հանձնաժողովի նախագահ՝

Խ. Ներկարարյան՝ (Գնահատող հանձնաժողովի նախագահ),

հանձնաժողովի անդամներ՝

Վ. Թադևոսյան՝ (Գնահատող հանձնաժողովի անդամ),

Ն. Սահակյան(Գնահատող հանձնաժողովի անդամ),

հանձնաժողովի քարտուղար՝

Մ. Ավագյան՝ (Գնահատող հանձնաժողովի քարտուղար):

Էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի շրջանակներում ստացված հարցումների վերաբերյալ

Պատասխանել էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի 21-րդ չափաբաժնի վերաբերյալ 06.03.2024թ. ստացված հարցմանը:

Հարցադրում N 1

Հարգելի՛ պատվիրատու, որպես 21-րդ չափաբաժնին վերաբերվող պարզաբանման պատասխան նշել եք "ԵՊՀ Ֆիզիկայի ինստիտուտի Կիսահաղորդչային սարքերի և նանոտեխնոլոգիաների կենտրում առկա է գազային ֆազայից քիմիական նստեցման համակարգը (YSU-CVD1):" Տեղեկացնում ենք, որ YSU-CVD1 մակնշմամբ համակարգ գոյություն չունի: Ամենայն հավանականությամբ դա ձեր ներքին մակնշումն է: Եվս մեկ անգամ խնդրում եմ տրամադրել արդեն իսկ առկա համակարքի բաղադրիչ մասերի մոդելները, սերիական համարները, արտադրող կազմակերպության տվյալները, համարժեքության գնահատման համար: Հիշեցնում ենք, որ առկա սարքավորումների մասին տեղեկատվության տրամադրումը չի հակասում օրենքին, այլ ընդհակառակը, օգնում է պահանջվող սարքավորման բնութագրերի առավել ճշգրիտ գնահատմանը:

Պարզաբանում N 1

Հարգելի մասնակից՝ ի պատասխան Ձեր հարցման հայտնում ենք, որ սարքավորումը հավաքվել է մեր կենտրոնում, ինչպես նաև հայտնում ենք, որ ապրանքի նմուշի նկարը կարող եք գտնել gnumner.am կայքի պարզաբանումներ բաժնում ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/49 ծածկագրի ներքո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի Նախագահ՝	_____	Խ. Ներկարարյան
անդամներ՝	_____	Վ. Թադևոսյան
	_____	Ն. Սահակյան
քարտուղար	_____	Մ. Ավագյան